29. Անցման կետերի անձնագրավորում՝ Մաքսային միության անդամ պետությունների արտաքին սահմանի անցման կետի անձնագրի ձևի հիման վրա՝ հաստատված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի N 688 որոշմամբ	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս
30. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի արդիականացման և (կամ) նոր տեղեկատվական համակարգերի ներդրման մասին աշխատանքային ծրագրի մշակում՝ նշելով ժամկետը, պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ներդրման գերակայությունները	Հայաստանի Հանրապետություն	Կատարվում է սույն ծրագրի 23-28-րդ կետերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո:

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
31. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների համար մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական-ծրագրային միջոցներ ստեղծելու և (կամ) տեղեկատվական տեխնոլոգիաներում և տեղեկատվական-ծրագրային միջոցներում փոփոխություններ կատարելու տեխնիկական պահանջների մշակում՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության հետ համապատասխանեցման նպատակով	Հայաստանի Հանրապետություն	ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի
32. Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության անդամակցելու կապակցությամբ՝ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ընդհանուր մաքսային ընթացակարգերի կիրառման նպատակով տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում, դրանց փոխանակման հաստատված տեխնոլոգիաներում և տեխնիկական պայմաններում փոփոխությունների կատարում	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի
33. Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ և ընդհանուր մաքսային ընթացակարգերով սահմանված պահանջների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում և (կամ) նոր տեղեկատվական-ծրագրային միջոցների մշակում և ներդրում, այդ թվում՝	Հայաստանի Հանրապետություն	ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի

Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների,  
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>մաքսային մարմինների միջև տվյալների փոխանակման համար (այդ թվում՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ) անհրաժեշտ փոխարկիչների կիրառում</p>		
<p>Մաքսային միության տարածքով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրումների նկատմամբ հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		
<p>անդամ պետությունների արտաքին սահմաններից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		
<p>անդամ պետությունների տարածք ժամանակավորապես ներմուծվող տրանսպորտային միջոցների հաշվառման և հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		
<p>մաքսային ծառայությունների միջև նորմատիվ- տեղեկատվական բնույթի տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		
<p>«Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև վարչարարական փոխօգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկությունների փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>«Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և հսկողական գործառույթների իրականացման համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագրին համապատասխան՝ տեղեկատվության փոխանակման համար անհրաժեշտ տեղեկատվական-ծրագրային միջոցների ներդրում</p>		
<p>34. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներդրված համակարգերով աշխատելու նպատակով պաշտոնատար անձանց ուսուցում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</p>
<p>35. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից մշակված (արդիականացված) տեղեկատվական-ծրագրային միջոցները թեստավորելու, փորձարկելու և շահագործման ընդունելու աշխատանքների կազմակերպում ու իրականացում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի</p>
<p>36. Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների մաքսային ծառայությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տվյալների փոխանակման համակարգի կազմակերպում (ինտեգրված</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
համակարգ ստեղծելուն ուղղված աշխատանքների շրջանակներում)	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ	աշխատանքային ծրագրի
37. Իրականացված աշխատանքների գնահատում և մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի ինտեգրման տիպային առաջարկությունների մշակում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն	ըստ սույն ծրագրի 30-րդ կետի համաձայն մշակված աշխատանքային ծրագրի
38. Մաքսային ներկայացուցիչների, մաքսային փոխադրողների, ազատ պահեստների տիրապետողների, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների, մաքսային պահեստների տիրապետողների, ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների ռեզիդենտների (մասնակիցների) ռեստորների հիման վրա՝ արդիականացված տեղեկատվության տրամադրում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամակցելուց 3 ամիս հետո
39. Մաքսային անցման կետերի, Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների ներսբերման վայրերի և Մաքսային միության մաքսային տարածքից ապրանքների դուրսհանման վայրերի վերաբերյալ	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելուց 3 ամիս հետո



Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
արդիականացված տեղեկատվության տրամադրում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	
40. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների տեղեկատվական-ծրագրային միջոցների կատարելագործում հաշվի առնելով Մաքսային միության ԱՏԳ ԱԱ-ին անցնելու հանգամանքը	Հայաստանի Հանրապետություն	Մաքսային միության ԱՏԳ ԱԱ-ին անցնելու մասին որոշումն ընդունելու օրվանից 2 ամիս
41. Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու հանգամանքով պայմանավորված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 254 որոշմամբ հաստատված՝ մաքսային փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների կառուցվածքում և ձևաչափերում փոփոխությունների կատարում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս

## II. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
42. Տեխնիկական կանոնակարգման և դրան առնչվող ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերի և Մաքսային միության իրավապայմանագրային բազայի իրավական համեմատական վերլուծություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի փոփոխություններ կատարել	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ	մինչև անդամակցելը

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>43. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում Հայաստանի Հանրապետության՝ որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության՝ երրորդ երկրների հետ (այդ թվում՝ ԱՊՀ շրջանակներում) կնքած միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների վերլուծության իրականացում</p>	<p>պետություններ Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>անդամ պետություններ</p>	<p>մինչև անդամակցելը</p>
<p>44. Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու կապակցությամբ տեխնիկական կանոնակարգման ոլորտում սույն ծրագրի 43-րդ կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերանայում և իրականացված վերանայման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (ըստ անհրաժեշտության)</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>անդամ պետություններ</p>	<p>մինչև անդամակցելը</p>
<p>45. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու համար անցումային շրջանի ժամկետների սահմանման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում՝ հաշվի առնելով Մաքսային միության ներկայումս գործող տեխնիկական կանոնակարգերում սահմանված անցումային դրույթները</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի</p>	<p>մինչև անդամակցելը</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
46. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի կիրառման խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործարար համայնքի հետ խորհրդատվությունների իրականացում և սննդամթերքի հարցերով, ինչպես նաև թեթև և ծանր արդյունաբերության հարցերով կլոր սեղանների անցկացում	Հանրապետություն Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն	մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով
47. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի կիրառման խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների մասնագետների հետ խորհրդատվությունների ծրագրերի մշակում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ	մինչև անդամակցելը
48. Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտի լիազոր մարմինների աշխատողների որակավորման բարձրացում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բազայի, ինչպես նաև անդամ պետությունների կրթական կենտրոնների բազայի հիման վրա (անդամ պետությունների հետ համաձայնեցված խնդիրների վերաբերյալ)	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  Հայաստանի Հանրապետություն  անդամ	մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>49. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի ներդրման հետ կապված խնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) աշխատողների պատրաստում, ուսուցում և որակավորման բարձրացում՝ ներգրավելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների աշխատողներին, այդ թվում՝ նաև անդամ-պետությունների կրթական կենտրոնների բազայի հիման վրա</p>	<p>պետություններ Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով</p>
<p>50. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի փորձագետների հետ համատեղ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտի մասնագետների համար կրթական ծրագրերի նախապատրաստմանն ուղղված համագործակցություն (անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև համաձայնեցված թեմաներով)</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>անդամ պետություններ</p>	<p>մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով</p>
<p>51. Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու պատրաստվածությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) և հավաստագրման մարմինների աշխատողների հետ խորհրդատվությունների անցկացում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների մարմինների աշխատողների</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>մինչև անդամակցելը, այնուհետ՝ կանոնավոր կերպով</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>կողմից</p> <p>52. Ըստ անհրաժեշտության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության համապատասխան համաձայնագրերի պահանջների համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվ բազայում փոփոխությունների իրականացման վերաբերյալ Առևտրի համաշխարհային կազմակերպության քարտուղարությանը ծանուցումներ ներկայացնելը (Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր)</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելուց հետո (Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջներին համապատասխան ժամկետներում)</p>
<p>53. Հետևյալ միջազգային համաձայնագրերին Հայաստանի Հանրապետության միանալը՝</p> <p>Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների և կանոնների մասին համաձայնագիր (2010 թվականի նոյեմբերի 18)</p> <p>Մաքսային միության տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին համաձայնագիր (2009 թվականի դեկտեմբերի 11)</p> <p>Համապատասխանության գնահատման (հաստատման) աշխատանքներ իրականացնող հավաստագրման (գնահատման համապատասխանության (հաստատման համապատասխանության)) մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) հավատարմագրման մարմինների փոխադարձ ճանաչման մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>համաձայնագիր (2009 թվականի դեկտեմբերի 11)</p>		
<p>Մաքսային միության անդամ չհանդիսացող Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների հետ փոխադարձ առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման վերաբերյալ Մաքսային միության անդամ հանդիսացող երկրների համաձայնագիր (2012 թվականի դեկտեմբերի 17)</p>		
<p>54. Մաքսային միության անդամակցության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտի օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու նպատակով աշխատանքների իրականացում և իրականացված փոփոխությունների վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողով տեղեկատվության ներկայացում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելուց հետո</p>
<p>55. Հայաստանի Հանրապետության տարածքում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի անմիջական գործողության ապահովմանն ուղղված միջոցառումների ծրագրի և դրանց կիրառման համար անհրաժեշտ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն որոշումների մշակում, որոնք վերաբերում են հետևյալ խնդիրներին՝</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելուց հետո</p>
<p>Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի N 620 որոշմամբ հաստատված՝ հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն ապահովող լիազոր մարմնի սահմանում</p>		

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
----------------------	----------	------------------

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման (հավաստման) փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասի ձևավորումն ու վարումն իրականացնող լիազոր մարմնի սահմանում, ինչպես նաև դրանց օպերատիվ տեղադրումը պաշտոնական կայքում՝ ապահովելով հանրամատչելիությունը

Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերով նախատեսված տեխնիկական կանոնակարգման օբյեկտների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինների սահմանում

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող լիազոր մարմինների սահմանում

Հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ներառում Մաքսային միության հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում

**III. Սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական ոլորտներում միջոցառումների իրականացման համար նախատեսվող քայլեր**

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>56. Հայաստանի Հանրապետության միանալը հետևյալ միջազգային պայմանագրերին՝</p> <p>«Սանիտարական միջոցների իրականացման մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր</p> <p>«Անասնաբուժական միջոցների իրականացման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր</p> <p>«Բույսերի կարանտինի մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>
<p>57. Հայաստանի Հանրապետության կողմից սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցների ոլորտում որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ ստանձնած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ (այդ թվում՝ ԱՊՀ շրջանակներում) կնքված միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված պարտավորությունների վերլուծության իրականացում: Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների արդիականացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում և դրանց ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով (անհրաժեշտության դեպքում)</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս</p>



Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>57.1. Սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցների ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրական նորմերի և կարգավորման պահանջների՝ Մաքսային միության իրավապայմանագրային բազայի հետ համապատասխանության ստուգման մասով իրավական վերլուծության անցկացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այն իրավական ակտերի որոշում, որոնցում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամսվա ընթացքում</p>
<p>58. Սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցների ոլորտում լիազորված մարմինների լաբորատոր բազայի լրացուցիչ նյութատեխնիկական, մեթոդական և կադրային համալրվածության ապահովման անհրաժեշտության գնահատում, սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցների ոլորտում լիազորված մարմինների լաբորատոր բազայի լրացուցիչ նյութատեխնիկական, մեթոդական և կադրային համալրվածության ապահովման միջոցառումների ծրագրի մշակում և այս նպատակներով անցումային շրջանի սահմանում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</p>
<p>59. Արտաքին սահմանի անցման կետերում իրականացվող սանիտարակարանտինային, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական ստուգման կազմակերպման համար անհրաժեշտ շենքերի, շինությունների, կառույցների, անձնակազմի կարողությունների՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի N 688 որոշմամբ հաստատված տիպային պահանջներին համապատասխանության մասով գնահատում և սանիտարակարանտինային, անասնաբուժական և կարանտինային</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
բուսասանիտարական ստուգման իրականացման նպատակով անցման կետերի՝ տիպային պահանջներին համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի մշակում		
59.1. Մաքսային միության հանձնաժողովի կողմից 2011 թվականի հունիսի 22-ի N 688 որոշմամբ ընդունված Մաքսային միության միասնական տիպային պահանջների և սույն ծրագրի 59-րդ կետում նշված միջոցառումների ծրագրի համաձայն սանիտարակարանտինային, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական ստուգում իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներով և միջոցներով՝ Մաքսային միության մաքսային սահմանի անցման կետերի շենքերի, շինությունների և կառույցների վերազինում և նյութատեխնիկական ապահովում	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի 59-րդ կետում նշված միջոցառումների ծրագրի համաձայն
60. «Սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցների համարժեքության և դիսկի գնահատում անցկացնելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 835 որոշման կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
61. «Միջազգային ստանդարտների, առաջարկությունների և ուղեցույցների կիրառման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի N 721 որոշման կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
62. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի N 299 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և մաքսային տարածքում սանիտարահամաճարակային վերահսկողության	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
(հսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկի կիրառում		
63. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի N 299 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և մաքսային տարածքում սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկին համապատասխան՝ արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջների իրականացման նկատմամբ պետական սանիտարահամաճարակային վերահսկողություն (հսկողություն) իրականացնելու մասով բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և սննդի անվտանգության ոլորտում լիազորված մարմինների լիազորությունների սահմանում	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
64. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի N 299 որոշմամբ հաստատված՝ սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա ապրանքների նկատմամբ միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջների կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
65. Մաքսային միության հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում սանիտարական միջոցների ոլորտում գործունեություն իրականացնող լաբորատորիաներն ընդգրկելու ուղղությամբ միջոցառումների իրականացում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
66. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի N 299 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանը հատող անձանց և տրանսպորտային միջոցների, Մաքսային միության մաքսային սահմանով և Մաքսային միության մաքսային տարածքում փոխադրվող՝ վերահսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակային հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու կարգի մասին դրույթի կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
67. Տեղեկությունների տրամադրում պետական սահմանների այն անցակետերի մասին, որտեղ իրականացվում է սանիտարակարանտինային վերահսկողություն (արտաքին սահմանի սանիտարակարանտինային անցման կետերի ցանկ)	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
68. Լիազորված մարմինների կողմից պետական սանիտարահամաճարակային հսկողության ոլորտում ավտոմատացված տեղեկատվական համակարգերի օգտագործման պայմանների ուսումնասիրություն	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 2 ամիս
69. Բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության և սննդամթերքի անվտանգության ոլորտում իրավասու մարմինների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
70. Արտադրանքի (ապրանքների) պետական գրանցման վկայականի միասնական ձևի օգտագործմամբ արտադրանքի պետական գրանցման համակարգի ներդրում՝ Մաքսային միության նորմատիվ իրավական բազային համապատասխան	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
71. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի N 299 որոշմամբ հաստատված՝ արտադրանքի պետական գրանցման վկայականի միասնական ձևի ընդունում և վկայականի ձևաթղթի օրինակելի ձևի ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
72. Արտադրանքի (ապրանքների) պետական գրանցման վկայականների ազգային ռեեստրի ձևավորում և դրա ներառումը պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
73. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկի կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
74. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված՝ անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջների կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
75. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>հսկողության իրականացման միասնական կարգի մասին դրույթի կիրառում</p>		
<p>76. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 834 որոշմամբ հաստատված՝ օբյեկտների համատեղ ստուգումների իրականացման և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի (ապրանքների) նմուշառման միասնական կարգի մասին դրույթի կիրառում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելու պահից</p>
<p>77. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 455 և 2011 թվականի ապրիլի 7-ի N 607 որոշումներով հաստատված՝ Մաքսային միության անասնաբուժական վկայականների միասնական ձևերի կիրառում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելու պահից</p>
<p>78. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N 342 որոշմամբ հաստատված՝ ձեռնարկությունների ռեեստրների և երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրի տվյալների փոխանցման ձևաչափին և կարգին ներկայացվող տեխնիկական պայմանների կիրառում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելու պահից</p>
<p>79. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողության իրականացման միասնական կարգի վերաբերյալ դրույթի համաձայն անասնաբուժական վերահսկողության դրոշմների, փաստաթղթերի և գրանցամատյանների ձևաթղթերի պատրաստում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելու պահի դրությամբ</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
80. Մաքսային միության տարածք հսկողության ենթակա ապրանքներ ներմուծող Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների ռեեստրի և երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստրի համապատասխանեցում Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N 342 և 2011 թվականի ապրիլի 7-ի N 624 որոշումներով հաստատված ձևերին	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահի դրությամբ
81. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողության իրականացման միասնական կարգի վերաբերյալ դրույթի համաձայն անասնաբուժական հսկողության կազմակերպում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
82. Հսկողության ենթակա ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման ժամանակ անասնաբուժական հսկողություն իրականացնող անցման կետերի ցանկի ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
83. Անասնաբուժության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի մասին տեղեկատվության ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
84. Հայաստանի Հանրապետության տարածքում անասնահամաճարակային իրավիճակի վերլուծության և գնահատման անցկացում և Միջազգային անասնահամաճարակային բյուրոյի ստանդարտների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների վտանգավոր	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
և կարանտինային հիվանդությունների ցանկի տրամադրումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին		
84.1. Անասնաբուժական վերահսկողության պաշտոնական համակարգին ծանոթանալու նպատակով Հայաստանի Հանրապետություն, այդ թվում՝ սահմանային հսկիչ կետեր այցելության կազմակերպում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով  անդամ պետություններ  Հայաստանի Հանրապետություն	մինչև անդամակցելը
84.2. Անասնաբուժության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից՝ պետական անասնաբուժական վերահսկողության բնագավառում այն ավտոմատացված տեղեկատվական համակարգերի ներդրում և կիրառում, որոնք օգտագործվում են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմինների կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինների աշխատակիցների վերապատրաստում անցնելու անհրաժեշտությունը	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
85. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 318 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին և Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից



Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
կարանտին օբյեկտ հանդիսացող արտադրանքի (կարանտին օբյեկտ հանդիսացող բեռների, կարանտին օբյեկտ հանդիսացող նյութերի, կարանտին օբյեկտ հանդիսացող ապրանքների) ցանկի կիրառում		
86. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 318 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի վերաբերյալ դրույթի կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
87. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 318 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի վերաբերյալ դրույթի կիրառում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից
88. Կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) գործառնություններ իրականացնող լիազոր մարմնի մասին տեղեկատվության ներկայացում Եվրասիական տնտեսական հանձնաժողով	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
89. Արտաքին սահմանի անցման կետերում կարանտին բուսասանիտարական հսկիչ կետերի ցանկի տրամադրում	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
90. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 894 որոշմամբ նախատեսված՝ կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) թույլատրման մասին նշումների (դրոշմների) և ակտերի միասնական ձևերի ընդունում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելու պահից

#### IV. Տրանսպորտի և ենթակառուցվածքների ոլորտ

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
91. «Մաքսային միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու մասին» 2011 թվականի հունիսի 22-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
92. «Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքները կարգավորելու մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալը	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
93. Տրանսպորտային հսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման միջոցառումների ապահովում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցելուց 3 ամիս հետո
94. Տրանսպորտին առնչվող հարցերի ոլորտում Մաքսային միության իրավապայմանագրային հիմք հանդիսացող այն միջազգային պայմանագրերի արդիականացում, որոնց միանալը պարտադիր է Հայաստանի Հանրապետության համար	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամիս
95. Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների միջև տրանսպորտի և հաղորդակցության ոլորտում կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը կիրառելու հետ կապված խնդրի և Մաքսային միությանը Հայաստանի	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
Հանրապետության անդամակցելուց հետո տրանսպորտի ոլորտի վրա այդ համաձայնագրերի ազդեցության ուսումնասիրություն	տնտեսական հանձնաժողով	
96. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի ցանկի սահմանում, որոնցում անհրաժեշտ կլինի կատարել փոփոխություններ՝ դրանք Մաքսային միության իրավապայմանագրային բազային համապատասխանեցնելու նպատակով	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս

#### Վ. Մաքսային բնագավառում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտ

##### 1. Մաքսային բնագավառում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային միանալը

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
97. Հայաստանի Հանրապետության միանալը հետևյալ միջազգային պայմանագրերին՝  «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր  «Սակագնային քվոտաների կիրառման մեխանիզմի և պայմանների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>«Սակագնային արտոնությունների տրամադրման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն</p>		
<p>«Բացառիկ դեպքերում միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառման պայմանների և կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն</p>		
<p>«Մաքսային միության արտոնությունների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն</p>		
<p>98. Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում կպահանջվի կատարել փոփոխություններ՝ մաքսասակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, կամ որոնք անհրաժեշտ կլինի ուժը կորցրած ճանաչել</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</p>
<p>99. Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցելու կապակցությամբ մաքսասակագնային կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<b>2. Մաքսասակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի նորմերի կատարումը և կիրառումը</b>		
100. Մաքսային միության միասնական արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի կիրառում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում
101. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային համապատասխան՝ սակագնային արտոնությունների տրամադրման ռեժիմի համեմատական վերլուծության իրականացում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում
102. ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում մաքսասակագնային կարգավորման ոլորտում ստանձնած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև (այդ թվում՝ ԱՊՀ-ի շրջանակներում) կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերլուծության իրականացում	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>103. Մաքսային միության միասնական մաքսային սակագնի ներկրման մաքսատուրքի դրույքաչափերի և Հայաստանի Հանրապետության ներմուծման սակագնի համեմատական վերլուծության իրականացում՝ հաշվի առնելով ԱՀԿ-ի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ստանձնած սակագնային պարտավորությունները, այդ թվում՝</p> <p>ԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ստանձնած սակագնային պարտավորությունների համեմատական վերլուծության արդյունքների և ելակետային տվյալների ճշգրտում</p> <p>Հայաստանի Հանրապետության մասով առաջնահերթ բանակցային իրավունք ունեցող երկրների ցանկի նախապատրաստում</p> <p>Մաքսային միության և Հայաստանի Հանրապետության մաքսային սակագների վերլուծության իրականացում՝ հաշվի առնելով 2010-2012 թվականներին երկրների արտաքին առևտրի ծավալները՝ այն ապրանքների ցանկի մասով, որոնց գծով ԱՀԿ-ի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ստանձնած պարտավորությունների վերջնական մակարդակն ավելի բարձր է, քան Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների մակարդակը</p> <p>Այն ապրանքների և դրույքաչափերի նախնական ցանկի մշակում, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությանն անցումային շրջանում անհրաժեշտ է Մաքսային միության կողմից սահմանված Միասնական մաքսային սակագների դրույքաչափերից տարբերվող՝ ներկրման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>104. Այն ապրանքների և դրույքաչափերի ցանկի սահմանում, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությանն անցումային շրջանում անհրաժեշտ է Մաքսային միության կողմից սահմանված միասնական մաքսային սակագների դրույքաչափերից տարբերվող՝ ներկրման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում</p>
<p>105. ԱՀԿ շահագրգիռ անդամ պետությունների ցանկի սահմանում՝ ԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների փոփոխման վերաբերյալ բանակցություններ անցկացնելու համար</p>	<p>Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>2014 թվականի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ</p>
<p>106. Հայաստանի Հանրապետության, անդամ պետությունների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև խորհրդակցությունների անցկացում՝ ԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները փոփոխելու վերաբերյալ ԱՀԿ անդամ պետությունների հետ բանակցություններ անցկացնելու մեխանիզմն ու հիմնական մասը սահմանելու հարցով</p>	<p>Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>2014 թվականի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ</p>

	<b>Միջոցառման անվանումը</b>	<b>Կատարողը</b>	<b>Կատարման ժամկետը</b>
107.	Հաջորդ եռամյա ժամանակահատվածում մաքսային սակագների մասով ստանձնած պարտավորությունների փոփոխման վերաբերյալ բանակցությունների իրավունքի պահպանման մասին ծանուցման ներկայացում ԱՀԿ քարտուղարություն	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	2014 թվականի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ
108.	ԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները փոփոխելու վերաբերյալ ԱՀԿ շահագրգիռ անդամ պետությունների հետ բանակցությունների կազմակերպում, անցկացում և համաձայնությունների ձեռքբերում	Հայաստանի Հանրապետություն  անդամ պետություններ  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո
109.	Մաքսասակագնային կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվային բազայում ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով ծանուցումների (հայտագրերի) ուղարկում ԱՀԿ քարտուղարություն	Հայաստանի Հանրապետություն  Եվրասիական տնտեսական հանձնաժողով	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո



Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<b>3. Ոչ սակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային միանալը</b>		
<p>110. Հայաստանի Հանրապետության միանալը հետևյալ միջազգային պայմանագրերին՝</p> <p>«Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր</p> <p>«Երրորդ երկրների նկատմամբ Միասնական մաքսային տարածքում ապրանքների արտաքին առևտուրը կարգավորող միջոցներ սահմանելու և դրանք կիրառելու մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագիր</p> <p>«Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագիր</p> <p>«Մաքսային միության տարածքով թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և դրանց պրեկուրսորների տեղափոխման կարգի մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագիր (Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 51 որոշում՝ ընդունված պետությունների ղեկավարների մակարդակով)</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>
<p>111. Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում կապահանջվի կատարել փոփոխություններ՝ ոչ</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
սակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, կամ որոնք անհրաժեշտ կլինի ուժը կորցրած ճանաչել		4 ամսվա ընթացքում
112. Հայաստանի Հանրապետության (Մաքսային միությանն անդամակցելուց հետո) և Մաքսային միության անդամ չհանդիսացող պետությունների միջև կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կիրառման խնդրի ուսումնասիրություն՝ ոչ սակագնային կարգավորման միջոցներ կիրառելուց ազատող նորմերի առկայության մասով	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 4 ամսվա ընթացքում
113. Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցելու կապակցությամբ՝ ոչ սակագնային կարգավորմանն առնչվող՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո
<b>4. Ոչ սակագնային կարգավորման ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի նորմերի կատարումը և կիրառումը</b>		
114. Մաքսային միությանն անդամակցելու հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության համար կիրարկման տեսանկյունից պարտադիր բնույթ կրող՝ Մաքսային միության և Մաքսային տնտեսական տարածքի մարմինների կողմից ոչ սակագնային կարգավորման ոլորտում ընդունված որոշումների կատարում, այդ թվում՝	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>«Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության ոչ սակագնային կարգավորման միասնական համակարգի գործարկումն ապահովելու մասին» Մաքսային միության 2010 թվականի հունվարի 27-ի N 168 որոշում</p> <p>Ապրանքների միասնական ցանկ, որոնց նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում երրորդ երկրների հետ առևտրում Մաքսային միության անդամ պետությունների կողմից ներկրման և արտահանման առումով կիրառվում են արգելքներ և սահմանափակումներ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2012 թվականի օգոստոսի 16-ի N 134 որոշմամբ հաստատված սահմանափակումներ կիրառելու մասին դրույթներ</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ 2012 թվականի մայիսի 16-ի N 45 որոշմամբ հաստատված՝ Եզրակացության (թույլատրման փաստաթղթի) միասնական ձև՝ դրա լրացման մեթոդական ցուցումների հիման վրա</p>		
<p>115. Ոչ սակագնային կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվային բազայում համապատասխան ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով ծանուցումների (հայտագրերի) ուղարկում ԱՀԿ քարտուղարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
----------------------	----------	------------------

**5. Ապրանքների մաքսային արժեքի ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազային միանալը**

116. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին (2012 թվականի ապրիլի 23-ի արձանագրության խմբագրությամբ) Հայաստանի Հանրապետության միանալը	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
117. Հայաստանի Հանրապետության այն նորմատիվ իրավական ակտերի ցանկի սահմանում, որոնցում կպահանջվի փոփոխություններ կատարել՝ ապրանքների մաքսային արժեքի ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, կամ որոնք անհրաժեշտ կլինի ուժը կորցրած ճանաչել	Հայաստանի Հանրապետություն	սույն ծրագրի հաստատման օրվանից 1 ամսվա ընթացքում
118. Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցելու կապակցությամբ՝ ապրանքների մաքսային արժեքի ոլորտը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարում	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

**6. Մաքսային արժեքի ոլորտում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի նորմերի կատարումը և կիրառումը**

119. Մաքսային միությանն անդամակցելու հետ միաժամանակ Հայաստանի	Հայաստանի	անդամակցության
---	-----------	----------------

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
Հանրապետության համար կիրարկման տեսանկյունից պարտադիր բնույթ կրող՝ Մաքսային միության և Մաքսային տնտեսական տարածքի մարմինների կողմից ապրանքների մաքսային արժեքի ոլորտում ընդունված որոշումների կատարում	Հանրապետություն	մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից
120. Ապրանքների մաքսային արժեքի ոլորտում Հայաստանի Հանրապետության նորմատիվային բազայում համապատասխան ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով ծանուցումների (հայտագրերի) ուղարկում ԱՀԿ քարտուղարություն	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո

## VI. Առևտրային քաղաքականության ոլորտ

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
121. Հայաստանի Հանրապետության միանալը հետևյալ միջազգային պայմանագրերին.  «Չարգացող և առավել թույլ զարգացած երկրների ապրանքների ծագումը որոշելու կանոնների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր  «Ապրանքների ծագման երկիրը որոշելու միասնական կանոնների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր	Հայաստանի Հանրապետություն	անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>«Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն</p>		
<p>122. Առևտրային քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ չհանդիսացող պետությունների միջև (այդ թվում՝ ԱՊՀ շրջանակներում) կնքված երկկողմ և բազմակողմ համաձայնագրերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների վերլուծության իրականացում և դրանց համապատասխանեցում Մաքսային միության իրավապայմանագրային բազայի հետ</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>սույն ծրագրի հաստատման օրվանից 3 ամիս</p>
<p>123. Հայաստանի Հանրապետության ներգրավումը Մաքսային միության՝ երրորդ կողմի հետ արտոնյալ առևտրային համաձայնագրեր կնքելու վերաբերյալ բանակցություններին՝ հաստատված հրահանգների հիման վրա</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>անդամ պետություններ</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>
<p>124. Երրորդ երկրների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմ պայմանավորվածությունների շրջանակներում արտոնությունների տրամադրման ռեժիմի փոփոխություն՝ Մաքսային միության իրավանորմատիվային բազային համապատասխան</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>

**VII. Հատուկ պաշտպանական, հակազնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման ոլորտ**

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>125. Հայաստանի Հանրապետության միանալը «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին և «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնագցման և փոխհատուցման միջոցների կիրառմանը նախորդող քննություններն իրականացնելու նպատակով քննություն իրականացնող մարմին տեղեկություններ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվություն տրամադրելու մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի արձանագրությանը</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>
<p>126. Մաքսային միությունում գործող հատուկ պաշտպանական, հակազնագցման և փոխհատուցման միջոցների՝ Հայաստանի Հանրապետության վրա տարածման մեխանիզմի մշակում (անդամակցության մասին միջազգային պայմանագրի նախագծում համապատասխան դրույթների հնարավոր ներառմամբ)</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>անդամ պետություններ</p>	<p>մինչև անդամակցելը</p>
<p>127. Հայաստանի Հանրապետության միանալը Մաքսային միությունում գործող հատուկ պաշտպանական, հակազնագցման և փոխհատուցման միջոցներին</p>	<p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p> <p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցության մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից</p>

Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>128. «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրով պահանջվող՝ բյուջետային դասակարգման ծածկագրերի բացվածք՝ հետևյալի առնչությամբ՝</p> <p>հատուկ, հակազնազցման և փոխհատուցման տուրքերի մուտքի (վերադարձման) գումարներ, այդ թվում՝ հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման այն տուրքերի մուտքի (վերադարձման) գումարներ, որոնց գծով վճարման պարտավորությունները ծագել են նախքան Հայաստանի Հանրապետության միանալը «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին</p> <p>բաշխված հատուկ, հակազնազցման և փոխհատուցման տուրքերի գումարներ, որոնք փոխանցվել են այլ անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին</p> <p>բյուջե հաշվեգրված եկամուտների գումարներ, որոնք առաջացել են հատուկ, հակազնազցման և փոխհատուցման տուրքերի բաշխման արդյունքում</p> <p>հատուկ, հակազնազցման և փոխհատուցման տուրքերի գումարներ, որոնք մուտքագրվել են բյուջե այլ անդամ պետությունների կողմից</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>	<p>անդամակցելու պահից</p>



Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
<p>հատուկ, հակազնազցման և փոխհատուցման բաշխված տուրքերի գումարներ, որոնց փոխանցումն այլ անդամ պետությունների արտարժույթային հաշիվներին կասեցված է</p>		
<p>129. «Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների միջև հատուկ, հակազնազցման և փոխհատուցման տուրքերի հաշվեգրմանը, բաշխմանը, փոխանցմանը և վերադարձմանն առնչվող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի մայիսի 16–ի N 60 որոշմամբ հաստատված դրույթում փոփոխությունների կատարում</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p> <p>անդամ պետություններ</p> <p>Եվրասիական տնտեսական հանձնաժողով</p>	<p>անդամակցելուց առնվազն 1 ամիս առաջ</p>
